



# ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 հունվարի 2007թ.

N 17

ք.Ստեփանակերտ

### ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՈՒՆԵՍՐԻ

#### ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Թափոնների մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը *որոշում է*.

1. Հաստատել թափոնների հեռացման վայրերի ռեեստրի վարման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության պետին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո եռամսյա ժամկետում հաստատել՝

ա) թափոնների հեռացման վայրերի ռեեստրի վարման նպատակով ներկայացվող գրանցման թերթիկի ձևը,

բ) ռեեստրի վարման գրքի ձևը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
վարչապետ

Ա. Դանիելյան

## Կ Ա Ր Գ

### ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՎԱՅՐԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ

#### I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կանոնակարգվում են թափոնների հեռացման (ոչնչացման, վնասագերծման, տեղադրման) վայրերի ռեեստրի (այսուհետ՝ ռեեստր) վարման հետ կապված հարաբերությունները:

2. Ռեեստրի վարման հիմնական նպատակը թափոնների հեռացման վայրերի (ինչպես գործող, այնպես էլ փակված կամ կոնսերվացված) հաշվառումը և նկարագրումն է:

3. Ռեեստրը վարում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությունը (այսուհետ՝ լիազոր մարմին)՝ սույն կարգի համաձայն:

4. Ռեեստրում գրանցման ենթակա են՝

ա) թափոնների վնասագերծման և ոչնչացման շահագործվող օբյեկտները,

բ) 25 քառ. մ-ից ավելի մակերեսով և (կամ) 50 խոր. մ-ից ավելի ծավալով թափոնների տեղադրման շահագործվող օբյեկտները,

գ) թափոնների թաղման օբյեկտները, որոնց շահագործումն ավարտվել է, սակայն խախտված տարածքի վերականգնում չի իրականացվել և հողամասն այլ անձի չի փոխանցվել:

5. Ռեեստրի վարման նպատակով՝ սույն կարգի 4-րդ կետով սահմանված իրավաբանական անձինք և անհատ ձեռնարկատերերը մինչև 2007 թվականի հունիսի 1-ը լիազոր մարմին են ներկայացնում գրանցման թերթիկ՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 30-ի թիվ 17 որոշման 2-րդ կետի «ա» ենթակետում նշված ձևին համապատասխան:

Ռեեստրում գրանցված օբյեկտները (այսուհետ՝ օբյեկտներ) մինչև յուրաքանչյուր տարվա մարտի 1-ը լիազոր մարմին են ներկայացնում տեղեկանք կատարված փոփոխությունների մասին:

#### II. ԳՐԱՆՑՄԱՆ ԹԵՐԹԻԿԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

6. Գրանցման թերթիկը ներառում է հետևյալ տեղեկությունները՝

ա) իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և օբյեկտների անվանումները, գտնվելու վայրերը,

բ) օբյեկտի մասին ընդհանուր տեղեկությունները (հողամասի նկատմամբ իրավունքի հիմքը, հողամասի մակերեսը, տեղանքը, բնապահպանական օբյեկտների առկայությունը),

գ) օբյեկտը շահագործման հանձնելու տարեթիվը,

դ) օբյեկտի հզորությունը (տ/տարի), թափոնների պահեստավորման սխեման՝ թափոնների տեղադրման օբյեկտների համար,

ե) թափոնների վնասազերծման կամ ոչնչացման դեպքում՝ տեխնոլոգիայի համառոտ նկարագիրը, հզորությունը (տ/տարի, տ/օր), տեխնոլոգիական սարքավորման տեսակը, շահագործման գործելակարգը (ռեժիմը),

զ) տեղադրվող կամ վնասազերծվող թափոնների բնութագիրը (անվանումը, ծածկագիրը, ագրեգատային վիճակը, վտանգավորության դասը, ծավալը՝ տ/տարի),

է) թափոնների հեռացման վայրերի մոնիթորինգի տվյալները (աղբավայրերից արտանետումների, արտահոսքերի և հողերի աղտոտվածության մասին),

ը) սանիտարական պահպանության գոտու բնութագիրը (սանիտարապահպանական գոտու լայնությունը՝ արտահայտված մետրով),

թ) մոտակա բնակավայրերից, ջրամատակարարման, ջրահոսքերի և ջրավազանների աղբյուրներից օբյեկտի ունեցած հեռավորության, սանիտարական պահպանության գոտու չափերի և դիտարկման հորատանցքերի դիրքի մասին:

7. Գրանցման թերթիկին կից ներկայացվում է բնապահպանական փորձաքննական եզրակացությունը:

### III. ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

8. Ռեեստրի վարման նպատակով կազմվում է ռեեստրի վարման գիրք, որում գրանցվում են իրավաբանական անձանց, անհատ ձեռնարկատերերի և օբյեկտների անվանումները, գրանցման թերթիկը ներկայացնելու ամսաթիվը, ռեեստրային գրանցման թերթիկին կից ներկայացված փաստաթղթերի անվանումները, օբյեկտին տրվող ռեեստրային համարը և օբյեկտի կողմից ներկայացված գրանցման թերթիկի ու դրան կից ներկայացված փաստաթղթերի պահման գործի համարը:

9. Լիազոր մարմինն ուսումնասիրում է օբյեկտի կողմից սույն կարգի 6-րդ և 7-րդ կետերի հիման վրա ներկայացված տեղեկատվության ամբողջականությունն ու հավաստիությունը և, թերություններ չհայտնաբերելու դեպքում, գրանցում է պետական ռեեստրի վարման գրքում՝ ռեեստրային համարի ամրագրմամբ:

Օբյեկտները ռեեստրում գրանցված են համարվում դրանց ռեեստրային համար տալու օրվանից:

Ռեեստրում գրանցման մասին լիազոր մարմինը պատշաճ ձևով տեղյակ է պահում իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին՝ նշելով օբյեկտի անվանումը, ռեեստրի գրանցման համարը և ամսաթիվը:

10. Օբյեկտները ռեեստրում գրանցվում են գրանցման թերթիկի ու դրան կից փաստաթղթերը ներկայացնելու օրվանից 30 օրվա ընթացքում: Ներկայացված փաստաթղթերը լիակազմ չլինելու կամ անճշտությունների առկայության դեպքում՝ օրենքով սահմանված կարգով վերադարձվում են լրամշակման:

Կրկնակի ներկայացված գրանցման թերթիկի ու փաստաթղթերի հիման վրա օբյեկտները ռեեստրում գրանցվում են սույն կարգով հաստատված ընթացակարգով:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության  
կառավարության աշխատակազմի  
ղեկավար-նախարար

Ս. Գրիգորյան